

ԷՄ. Բ. ԱՂԱՅԱՆ

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ *Ger ԱՐՄԱՏՐ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հնդեվրոպական այս արմատը, որի նախնական իմաստն է «դարձնել, դալարել, ոլորել», բազմազան ձևերով և իմաստի զանազան փոխանցումներով բազմաթիվ բառեր է տվել հնդեվրոպական լեզվաընտանիքի բոլոր ճյուղերում: Այս արմատից է հայերեն կարթ բառը, որի ծագումը հանգամանորեն լուսարանում ու հիմնավորում է Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» (հ. 3-րդ, էջ 1069—1071)¹ հենվելով է. Լիդենի ստուգաբանության վրա:

Մեր քննությունները, սակայն, երևան են բերում այդ արմատի ուրիշ ժառանգներ, որոնք և ցույց են տալիս, որ հայերենում էլ հնիս. *ger արմատի մի մեծ բառախումբ է տվել՝ բազմազան իմաստալիկ փոխանցումներով և դանազան ձևափոխություններով, ավելի ճիշտ՝ ձայնդարձի տարրեր աստիճաններով ու ածանցումներով: Մեր նոր ստուգաբանությունների համաձայն հնիս. *ger արմատից են ծագել, բացի կարթ բառից, նաև հետևյալ հայերեն բառերը:

1. Կրուկ. Կրուկն > կրուկն. — Այս բառը է. Լիդենը կապում է հնիս. *g-ru «ծուռ» բառին, որ բնդունում են նաև Վալդեն և Պոկորնին², մինչդեռ Հր. Աճառյանը՝ ճիշտ կերպով մերժում է, որովհետև հնիս. *g- հայերենում դառնում է ծ և ոչ՝ կ:

Մենք ծագած ենք համարում հնիս. *ger արմատի Ծ ձայնավորով ձայնդարձից՝ *gōi > հայ. կուր, որ ուկ, ուկն մասնիկի հավելումով դարձել է *կուրուկ(ն) > կրուկն: Հնդեվրոպական արմատի սկզբնական իմաստից ցեղակից լեզուներում զարգացել են «կորուժյուն, կեռ, դունդ, մազիլ, սապատ» և այլ իմաստներ: Հայերեն կրուկն բառն էր իմաստով կապվում է հին հյուսիսային kraki «խարիսխի նման կեռով ձող, Stange mit Haken am Ende, Art Anker», հին բարձր գերմ. kracho (<*krēkan), kraco (<kraggan) «ծնկաձև իր», հին հյուսիս. krakr, krokr «ճկվածք, կորուժյուն, կեռ, անկյուն» (որից փոխառված է ռուս. крюк «կեռ»), անգլ. crook «ծռուժյուն, կորուժյուն, հովվական զավազան, կեռ», նորվեգ. krykkia «առթացույց, հենակ», krykia «կոր փայտ», kryla «կորամեջք լինել», krylt «սապատավոր մարդ», հին բարձր գերմ. kragō «կեռ», ռուս. ropō «սապատ, կուղ», հին բարձր գերմ. krampe «կեռ», գերմ. krampe «ճանկ, կորակոտց երկաթ, դռան կեռ», միջին ցածր գերմ. krappe «կեռ, մազիլ», հին բարձր գերմ. krapfo «կեռ, ճանկ», միջին բարձր գերմ. krape «կեռ», չվեգ. krabbe «կարթ», հին իռլանդերեն gairr

¹ A. Walde, Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen, herausgegeben und bearbeitet von Julius Pokorny, Berlin und Leipzig, 1927—1930, B. I, S. 557 (տեքստում հիշելու ենք WP համառոտագրությունը), J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I, Bern und München, 1959, S. 385—390 (տեքստում հիշելու ենք Pok համառոտագրությունը):

² Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. 3-րդ, 1932, էջ 1481—1482 (տեքստում հիշելու ենք Արմ. համառոտագրությունը):

սարունքի ոսկորը» և այլն (WP, I, 593—598); Ձևի համար (օ ձայնավոր) հայերենի հետ համեմատելի են հին հնդկերեն *gala* < *goro «եղեգն, պարան», հին հյուսիս. *karmr* < *gor-mo-s «թումբ, պատնեշ», շվեդ. *karin* «կողով, քրթոց» և այլն:

Հայերենի կր-ուկ(ն) կազմության համար համեմատելի է արմ-ուկն բառի հետ, որ ունի նույն -ուկ(ն) մասնիկը: Հին հայերենում, ինչպես և բարբառներում և արդի գրականում կրուկն նշանակում էր ոչ միայն ոտքի գարշապարը, այլև՝ «ծխնիի ոտք, դռան կրունկ», որի զուգահեռները կան բերված օրինակներում:

Լեզուների մեջ սովորական է ոտք, սրունք, կրունկ, ոտքի քաթ իմաստների զարգացումը «կոր, ծուռ» իմաստից, ինչպես, օրինակ, լատիներեն *calx* «կրունկ» ծագում է հնիս. **skel* «ծոնել, ճկել, ծուռ, կոր» արմատից, որից են հայերեն շեղ և խեղ: Այդպես է նաև հայերեն կրունկ բառը, որ ստացվել է նախնական «ծուռ» իմաստից, որի համար, սակայն, լավագույն վկայությունը տալիս է հենց հայերենը: Ասացինք, որ հնիս. նույն արմատից է ծագում նաև կարթ բառը, իսկ այդ բառի գրաբարչւն իմաստներն են. 1. «ճանկաւոր կամ ժանկաւոր գործի երկաթի առ որսալոյ խալծիւ զձկունս և որ ինչ նման է նմա», 2. կարթածն կամ ճանկածն մասն կրնկանց ոտից թռչնոց և ալոց կենդանեաց. և ընդհանրապես կրունկ. սրունք. գարշապարք. ջիւք ոտից. ոլոգ. ոտք. յօդք» (ՆՀԲ): Ահա «կրունկ» իմաստի համար մի քանի վկայություններ, որոնք քաղում ենք ՆՀԲ-ից, «Կարթք նորա սիւն կճեալ»: «Եթէ զթիկունս իմ դարձուցանիցեմ, զկարթս հարկանիցեն՝ ոլք իմք իցեն» (Եփր. Աւետարան): «Հարցուկ նստէր ի վերայ երեքոտանուն, և դատուցեալ զկարթսն» (Սսկ. Ա Կորնթ.): «Նորին կարթիցն գել արկեալ, նաև զծունկսն յօշոտեալ» (Շնորհալի): Այսպիսով, կրունկ և կարթ նույնանում են թե՛ ըստ ծագման և թե՛ ըստ իմաստի:

2. Կոր, կեռ, կոռ.— Այս երեք բառերը Հր. Աճառյանը ճիշտ կերպով միացնում է իրար և երեքի կապող օղակն է համարում կոռ: Այս բառը, որ պահված է միայն բարբառներում, կապող օղակ է նաև մեր բառերի և հնիս. արմատի տարբեր իմաստների միջև: Այսպիսի՝ կոռ (Մոկք, Սալմասա, Վան) «կոր, ծալը ծռած, կեռ, կոր գլխով», Մոկք և Վան նաև՝ «կորացրած ծալքով հովվական գալաղան», Մուշ և Վան՝ «ծալը կեռ ցուպ», կոռ-մոռ գալ (Վան) «ծռումով», կոռագլուխ (Վան) «խարդախ, խաբեբա», կոռակոտոշ (Վան) «ծուռ եղջյուրներով», կոռացնել (Երև.) «ծռել», կոռել (Մոկք, Վան) «որեւէ բանի ծալը կեռ շինել», կոռվել (Վան) «ծռվել, կորանալ, կզվել», կոռալ (Վան) «զուրս ցցված մեծ ժայռ», կռակոռ (Հարաբաղ) «կորաքամակ պառավ» (Արմ., Գ, 1359—1361): Այս բառի զանազան նշանակությունները միմյանց են կապում մի կողմից կոր և կեռ, մյուս կողմից՝ դրանց և կարթ բառի նախնական իմաստները: Սրանից էլ արդեն հետևում է, որ կեռ, կոր և կոռ ծագում են հնիս. **ger* արմատից, որի ցեղակից ձևերից մի քանիսը բերեցինք վերը՝ կրունկն բառի տակ: Կեռ և կոր բառերի ու հնչյունը, կոր բառի ր-ի դիմաց, ստացվել է հնիս. *rs* կապակցությունից (*gers > կեռ, gors > կոռ), որի համար ցեղակից ձևերից կարելի է հիշել. հին բարձր գերմ. *kresan* (հնիս. *gres ձևից) «գետնին գալարվելով քարշ գալ, սողալ», *krasen* «թուլլ», միջին բարձր գերմ. *krisen*, *kres* «սողալ, քարշ գալ» և այլն (WP, I, 597; Pok., I, 358—390): Կոր, կեռ իմաստների համար հատկապես պետք է հիշել. հին հյուսիսային *kringr* «օղ, շրջանակ», նոր բարձր գերմ. *kring*, հին հյուսիսա-

լին *kringla* «շրջանակ, բոլորակ», միջին բարձր գերմ. *krank, -ges* «շրջանակ, բոլորակ», նոր բարձր գերմ. *crangel* «կորուծյուն», հոլանդերեն *kronkel* «ճկվածք, կորուծյուն», անգլ. *crook* «ծոռություն, կորուծյուն, կեռագլուխ հովվական գավազան» (հմմտ. *Մուշի և Վանի*¹ կոռ «ծալրը կեռ ցույց»), նորվեգ. *krykia* «կոր փայտ», հոլանդ. *krinkelen* «ճկվել, կորանալ, ծովել», նորբարձր. գերմ. *krauch* «ճանապարհի ոլորան», հուն. *κράυω* «կոր, կորաքիթ», *κράυω* «կորացնում եմ, ճկում եմ, ծռում եմ», անգլ. սաքս. *crippan* «ճկել, ծռել, կորացնել», նորվեգ. *krypa* «ծռել, կորացնել», *kryla* «կորամեջք լինել» և այլն:

3. Կուռն.— Այս բառը ժամանակակից հայերենում և բարբառներում ունի «բազուկ» հիմնական իմաստը, բայց հնում նշանակել է «կոնակ, թիկունք, թևի և ուսի միացման տեղը»: Հնիւ. նույն **ger* արմատն է՝ Իմաստի տեսակետից մեր բառի զուգահեռն են կազմում. նորվեգ. *kryla* «կորամեջք լինել», *krūk* «կորամեջք, մեջքի վերին մասը, թիկունք», հիւս. *որոս. гребъ. гѣрбъ* «մեջք, բլուր», *որոս. гребъ* «1. սապատ, կուզ, 2. (գլխ.) կրկնակ, մեջք», հին սլավ. *гребъ* «մեջք», սլովեն. *греб, гребав, բուլղար. гребъ, гребѣць* «զորքի թիկունք, աշխատանք, ճիգ, ծախս», *гребывашъ* «ուռուցիկ», *гребина* «մեջք», սերբ-խորվաթական *гр'bara, гр'бина* «մեջք», *гр'batise* «ճկվել, կռանալ, խոնարհվել» և այլն (WP, I. 594—596; Pok., I. 385—390, Преображенский, I. 146): Այս բառերի և վերի բարբառային կոռ ու կուռն բառերի իմաստային կապի համար առանձնապես կարևոր է 'Էարաբադի բարբառի կոռակոռ բառը, որ նշանակում է «կորաքամակ պառավ» (հմմտ. նորվեգ. *kryla* «կորամեջք լինել», *krylt* «սապատավոր մարդ», *krūk* «կորամեջք»), բառի նշանակությունը ցույց է տալիս, որ կոռակոռ պետք է համարել ոչ թե կոռ «ծռու», կոր» բառի կրկնությունը, այլ կոր և կուռ բառերից կազմված բարդություն (—կորամեջք): Այդ նույն կոռակոռ բառը ցույց է տալիս, որ հայերեն կուռն բառի ու-ն ստացվել է *rs-*ից, ինչպես վերի կոռ բառը. դա ապացուցվում է նաև կուռն բառի կուռն գրաբարյան սեռականով, որի մեջ ո հնչյունը ն-ից հետանալով՝ ր չի դառնում: Նշանակում է, այդ բառի մեջ ն վերջահանգ հնչյունը հայկական հավելում է:

4. Կոռ¹.— Այս բառը հիշում է Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» (Բ. 1340)՝ հետևյալ բացատրությամբ. «Վեգի նման մի ոսկոր», ունի միայն ՀՀԲ, առանց վկայություն. գտնվում է գավառականներում. ինչպես՝ Մկ. կոռ, Երև. կոռան, Շիր. կոռա թեզան, կովի, ցուլի, արջառի և հորթի վեգ: Իմաստը և ձևը ցույց են տալիս, որ ծագում է հնիւ. **ger* արմատի **gors* ձևից: Իմաստի համար համեմատելի են նույն արմատից ծագած՝ հայերեն կրուկ, կրուկն և հին իսլանդերեն *gairr* «սրունքի ոսկորը, ոլոք, վեգ»: Վերջահանգ ո հնչյունը կարող է դիտվել որպես *gairr*-ն աճած ձևի *r* > ո օրինաչափ փոփոխություն. բայց կարելի է նաև ենթադրել հնագույն կոռն ձևը, որ թելադրում է Երևանի կոռան բառը, և այդ դեպքում կունենանք *ր* > ո սովորական փոփոխությունը ն-ից առաջ:

5. Կոռ².— Հիշում է դարձվալ Հր. Աճառյանը «Արմատական բառարանում» (հ. 3, 1340), որ մենք մեկնել ենք և ստուգաբանել՝ կապելով հնիւ. նույն **ger* արմատի հետ¹:

¹ Բ. Բ. Աղայան. Բառարանություն, ՀՍՀՄ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի «Լրաբեր», 1965, № 12:

6. *կուռ > կռանալ, կռել. — Հ. Աճառյանն այս բառերը դիտում է որպես կեռ բառի ածանցավոր ձևեր և Վերմատական բառարանում² դնում է դրա գավառական ձևերի շարքում: Մատենագրության մեջ գործածվել է 10-րդ դարից: Այժմ գործածական է բարբառների մեծագույն մասում, ժողովրդական-խոսակցական լեզվում, ինչպես և՛ գրականում: Կեռ բառի ածանցավոր ձևեր լինելու դեմ է խոսում ե ձայնավորի սղումը բոլոր բարբառներում: Ղարաբաղի, Ագուլիսի, Մեղրու, Ջանգեզուրի և մի քանի այլ բարբառներում դաստորական է, ըստ որում շեշտից առաջ ընկնելով՝ բոլոր ձայնավորներն էլ սղվում են կամ դառնում ը: Այդպես չէ, սակայն, Սրարատյան, Թբիլիսիի և այլ բարբառներում, որոնց մեջ ե > ք ձայնավորը շեշտից առաջ էլ մնում է, ինչպես՝ մեծ → մեծա՛նալ, մեծանալ, մեծանալ, տեղ → տեղալօրեկ (հմմտ. Մեղրի՝ տղղլվուրիլ) և այլն: Սրանից պետք է հզրակացնել, որ հայերենում ունեցել ենք կեռ բառի ու ձայնավորով ձևը՝ կուռ: Այս բանը հաստատվում է նաև այն բարդ բառերով, որոնք ավանդված են մատենագրության մեջ. դրանցից են՝ կռածագ Վեր ծալրով³ (վկայված 10-րդ դարից), կռակտուց Վեր կտուցով⁴ (վկայված 14-րդ դարից), կռաշուրք Վեր շրթունքներով⁵ (վկայված 8-րդ դարից), կռապոզ Վեր՝ կեռ հղջուրներով⁶ (վկայված 10-րդ դարից): Այս բարդությունների առաջին բաղադրիչի սղված ձայնավորը ե չի կարող լինել, ուստի պետք է կանխադրել կուռ կամ կլու. առաջինը նախընտրելի է, որովհետև հաստատվում է կուռն բառով, որ նույնպես ունի ու ձայնավորը:

Այսպիսով, հնիւ. *ger արմատից հայերենն ունի. կարթ, կրուկ (կրուկն > կրունկ), կոթ, կեռ, կոռ¹, կոռ², կուռ (կռել, կռանալ), կուռն (կռնակ):